№ 10 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 27 **1894** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 27 № 10

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1894 ԹԻԱԿԱՆԻՆ

22-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 22-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարվանը՝ 6 ռուբլի, ամսական՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնում):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վանքական կալուածքների վիճակը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նկատողութիւն. Ուսուցչական ցէնզի նոր կանոններ. Բագուի Մարդասիրական ընկերութիւնը. Նամակ Էջմիածնից. Նամակ Ախալցխայից. Նամակ Զաքաթալայից. Նամակ խմբագրութեան. Նեղքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կանանց մի նոր յաղթութիւն. Սերբիա. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՐՈՒԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Փարիսեցի.

ՎԱՆՔԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ամենքս գիտենք, որ մենք ունենք վանքական մեծ կալուածքներ, որոնք հարիւրաւոր և հազարաւոր դեսիատիններով պարունակում են իրանց մէջ անտառներ, արօտատեղեր և վարելահողեր: Անկասկած շատերը նոյն իսկ առիթ են ունեցել զանազան պատճառներով անցնել այդ կալուածքների հողերով և տեսնել այն մեծ տարածութիւնները, որոնք գտնվում են վանքերի ձեռքին:

Այդ կալուածքները թէ իրանց մեծութեամբ և թէ իրանց դիրքով կարող են զգալի ծառայութիւն մատուցանել վանքերին՝ կատարելու հասարակաօգուտ, կուլտուրական գործ: Բայց, ի հարկէ, այդ կարող է լինել այն ժամանակ, երբ նրանց վերահսկողութիւնը և կառավարութիւնը կազմակերպված կը լինեն բաւարար կերպով, ներմուծված կը լինեն տնտեսական այնպիսի բարեփոխութիւններ, որոնք ոչ միայն կաւելացնեն հողի արդիւնաբերութիւնը, այլ և կարող կը լինեն թէ՛ օրինակ դառնալ շրջապատող ազգաբնակութեան համար, և թէ կրթական կենտրոններ լինել գիւղական մանուկների համար:

Վանքական կալուածքների ներկայ տընտեսական վիճակը շատ անմխիթար է. շատ տեղ այդ մեծ կալուածքների արդիւնքը այնքան քիչ է, կամ այնպէս անկանոն և անկարգ կերպով է ստացվում, որ նա վանական կառավարութիւնների առօրեայ պէտքերի հաշուում կորչում է: Մինչդեռ Անդրկովկասի ներկայ տնտեսական հանգամանքները, բացված ճանապարհների, մթերքների բարձրացած գների, նոր մշակութիւնների և կատարելագործութիւնների շնորհով թոյլ են տալիս աւելացնել հողի արդիւնաբերութիւնը, իսկ զգալի կերպով բարձրացած հողի գինը պահանջում է նոյն իսկ, որ հողի տուած արդիւնքը լինի անհամեմատ աւելի մեծ, քան ստացվում է այժմ:

Կալուածքների վերաբերեալ մի կարևոր խնդիր, այն է նրանց սահմանների որոշումը—մնտենում է իր լուծման: Կալուածքներից մի քանիսի շրջապատը վաղուց գծագրված և պաշտօնապէս ընդունված էր, միւսներինը պարզվեց և հաստատվեց այս վերջին տարիներում: Շատ հասկանալի է, որ քանի չը կային օրէնքով ճանաչված ճիշդ և որոշ սահմաններ, դժուար էր կարգին գործունէութիւն ըսկսել, կանոնաւոր տնտեսութիւն կազմակերպել հաստատ հիմունքների վրա, բայց, ի հարկէ, այդ հանգամանքը չէ եղել գլխաւոր պատճառը այն անմխիթար վիճակի, որի մէջ գտնվում է ներկայ կալուածական կառավարութիւնը:

Այժմ պէտք է գործել եռանդուն կերպով և ջանք թափել կալուածքների դրութիւնը բարձրացնել: Բայց, ի հարկէ, նախ և առաջ պէտք է գիտենալ այն, թէ ինչի համար պէտք է աշխատենք, պէտք է որոշ և պարզ գաղափար ունենալ այդ կալուածքների որպիսութեան և վիճակի մասին: Այդ ուսումնասիրութիւնը մի կարևոր գործ է, որին պէտք է ձեռնարկել առանց յետաձգելու, որչափ կարելի է շուտ:

Կալուածքների մակարդակը, հողի տարածութիւնը, մշակված և անմշակ տեղերի մեծութիւնը, գիւղացիների յարաբերութիւնների, հասոյթների բնաւորութիւնը և հաւաքումը, տնտեսութեան եղանակը—ահա կէտեր, որոնք պահանջում են մանրամասն բացատրութիւններ:

Մի քանի ձեռնհաս անձինք, այցելելով կալուածքները և տեղն ու տեղը ծանօթանալով գործի հետ, կարճ միջոցում կարող են այնքան ուսումնասիրել նրանց ներկայ դրութիւնը, որ կարելի լինի որոշել նախնական բարեփոխութիւնների ծրագիրը:

Երբ վանքերի կալուածքները կարգի բերված կը լինեն, երբ նրանք կը սկսեն կանոնաւոր կերպով ստանալ այն բոլոր արդիւնքները, որ նրանք կարող են տալ—նրանք ոչ միայն կը կարողանան ապահովացնել վանքի սեփական պահանջները, կարողութիւն կը տան նրանց կուլտուրական կենտրոններ դառնալ, այլ և կը տան էջմիածնին այնքան գումար, որ նա պէտք չի ունենայ դիմել կողմնակի հասոյթների և ժողովարարութիւնների:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ում չէ պատահել ականատես լինելու հետեւեալ տգեղ սովորութեան: Յուղարկաւորութիւնների ժամանակ՝ ննջեցեալներին տնից եկեղեցի, եկեղեցուց գերեզմանատուն առաջնորդելու համար, հանդիսին չքեղութիւն տալու կամ ննջեցեալի աղգականից յօգուտ ուսումնարանի մի քանի ռուբլի նպաստ ստանալու ակնկալութեամբ, տեսնում էք՝ ահա ուսումնարանի խեղճ, աղքատ, կիսամերկ փոքրիկ երկսեռ աշակերտներին, նրանց դասատուների հետ միասին, ստիպում են մասնակցել յուղարկաւորութեան: Ի՞նչ անուն տալ այդ տգեղ սովորութեան: Տարվայ ամեն տեսակ եղանակներում, մանաւանդ ձմեռ ժամանակ, մինչ կարելի է այդ փոքրիկներին, ժողովրդի աղքատ դասակարգի զաւակներին դուրս բերել և ժամերով կանգնեցնել ձիւնի, անձրևի, ցեխի ու խոնաւութեան մէջ և ստիպել նրանց իրանց ցնցոտիներում դողդողալ: Արդեօք դա անգթութիւն չէ:

Ձեզ ենք դիմում, աղա-հոգաբարձուներ, չէ՞ որ դուք լինելով այդ տեսակ հանդէսներում ներկայ եղած ժամանակ ցրտից, անձրևից և խոնաւութիւնից հիանալի կերպով և շատ զգուշութեամբ գիտէք պաշտպանել ձեր մարմինը տաք պալտոներով, մուշտակներով, ձեռնոցներ ու կրկնակոշիկներ ունէք հագած, մինչև անգամ գլխարկներ չէք հանում, որպէս զի ձեր գլուխները չը մրսացնէք, հարբուխ չը ստանաք,—ասեցէք ի սէր Աստուծոյ, ինչ խղճմտանքով թոյլ էք տալիս և ուզում էք, եթէ առողջացնելու գործը պիտի խանգարէ այս ինչ ծէսը: Նա խունկ է ծխում առաքինի նահատակների առաջ, զարդարում է նրանց գերեզմանները, երգվում է նրանց անունով. նա լաց է լինում, կուրծք է ծեծում և կշտամբում է նահատակողներին. բայց մտածել, հասկանալ չէ ուզում, որ հէնց իր նմաններն էին նահատակողները: Դրսից խաբուսիկ փայլ, ներսից զաղրալի աղտեղութիւն. այդ է ահա մարդկութեան անռեալ, անմահ և արիւնարբու, մահացնող թշնամին...

Փարիսեցի—դա մարդու հրեշաւոր այլանդակութիւն է: Բարեպաշտութիւնը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ այդ տեսակ այլանդակութիւնից հեռու մնալու հասկացողութիւն. բայց այլանդակութիւնը ինքն է դառնում բարեպաշտութիւն: Ոչ մի սրբութիւնից չէ սարսափում նա, չը կայ սրբութիւն, որին չը մօտենայ նա՝ հանգիստ սրտով թիկն տալու համար: Եւ եթէ լսում է աղքատ, կրակոտ ձայնը, որ բարձրանում է նրան մերկացնելու համար, նա օրհասական այդ բօսէին բղաւում է. «Ի խաչ հան»: Եւ ամբոխը գնում է նրա ետեւից: Մարդկային բնութեան յատուկ է խաբվել, մոլորվել. ուրեմն կայ փարիսեցին և միշտ պիտի լինի:

Սարսափելի է մանաւանդ, երբ փարիսեցութիւնը դառնում է դասակարգային կազմակերպութիւն, երբ անհատների յատկութիւնները ձուլվում են մի սիստէմայի մէջ, համախմբվում են: Մթնում է լոյսը, օրը ապականվում է, ապականվում, խեղդում է անողորմ կերպով...

Լէօ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՐԻՍԵՑԻ

Նոր կտակարանի այս տխրահռչակ հերոսները հրէական ազգի մասնաւոր ծնունդը չէին: Փարիսեցի—դա մի ընդհանրական տիպ է, որ ապրում է ամեն տեղ, ամեն ազգի մէջ. նրա համար աշխարհագրական սահմաններ չը կան. իւրաքանչիւր շրջան, որ մարդկային է, պտղաբերում, հասունացնում է նրան: Հրէական ազգին պատկանում է միայն այդ համաշխարհային, տարածված տիպին մի որոշ անուն յատկացնելու պատիւը: Փարիսեցի... դա մի հասկացողութիւն է, մի անջնջելի խօսք, որ յաւիտեան դուցէ գոյութիւն ունենայ և տիպի յատուկ անունը կը դառնայ:

Ինչ է դա:—Մարմնացած խաբէութիւն, կեղծիք: Մարդկային ազգը դրա պէս մի ուրիշ վնասակար, ահռելի թշնամի չունի և այդ պատճառով երկնային մեծ վարդապետը, որ եկել էր մարդկային կեանքը վերանորոգելու, գեղեցկացնելու, անհաշտ պատերազմ հրատարակեց այդ թշնամու դէմ և իր աքանչելի հանճարի մեծ մասը նուիրեց այդ պատերազմին: Մեծ վարդապետը չը կարողացաւ բնաջինջ անել այդ վնասակար սերմը. նա չէր էլ եկել մենակ այս աշխարհում դրախտ պատրաստելու և մարդուն յանձնելու համար: Այլ նրա մեծահրաշ գործն էր բաց անել մարդու աչքերը, լայնացնել նրա մտքի հորիզօնը, սուրբ գաղափարներով զինել նրան բոլոր խաւար ու դժոխային ոյժերի դէմ: Եւ փարիսեցին ապրեց նրա ժամանակ, չը զրկվելով իր կարողութիւնից, որը վերջապէս տարաւ նրան խաչափայտի վրա բեւեռելու: Տիպը չը ջնջվեց, բայց դատապարտվեց աւելի սոսկալի պատժի—դուրս բերվեց մթութիւնից, լոյս ստացաւ և այդպիսով զարկ ստացաւ դիմելու դէպի անվերջ յաւիտենականութիւն, կրելով ճակատի վրա իր անունը, որ իր էութիւնն է պարզում, մի անուն, որ չը նայած իր գոյութեան իրաւունքին, ամբողջապէս զզուանք է...

Փարիսեցի—դա շատ բարդ տիպ է, հաւաքական յատկութիւնների մի հատոր է: Նա գնում է փողոցով, քարշ է տալիս իր ոտները այնպէս, որ նրանցով շարժէ փողոցում թափված բոլոր քարերը, բոլոր այնպիսի առարկաները, որոնք կարող են ձայն հանել, այն էլ բարձր ձայն, որ մարդու ականջներին հասնէր և ցոյց տար նրա գոյութիւնը: Նա բարեպաշտ է, չէ ուզում կնոջ երես տեսնել, որովհետև անպայման սրբակեաց է, ուստի փակում է աչքերը, մտնում է դալիս այդպէս և անդադար զարնվում է պատերին, ցանկապատերին. ջարդում է իր դէմքը, խեղդում է իր մէջ ցաւի զգացմունքը, միայն թէ հրապարակում սուրբ և մաքուր երևալու նշաններն ունենայ: Նա մտնում է դալիս մէջքից կռացած, երեք տեղից ծալված, ցոյց տալու համար, որ օրէնքի ամբողջ ծանրութիւնը միայն նա է կրում իր ուսերի վրա: Նա տանջվող է, չարչարվող է, նա անասելի հեծեծանքներ է արձակում, միշտ ախ ու վախն է բերանին և ուտում է իր միսը, խորովվում է անդադար—ինչի համար... որպէս զի ծիսարանի մի ամենափոքր, ամենաանչան յօդուածը չը մոռացվի, ծէսերի կանոնները մազի չափ չը խանգարվեն և ամեն մի կէտ կատարվի ճշդութեամբ: Նա փառաւոր կերպով օծվում է, սարքվում, դուրս է գալիս մարդկանց մէջ. անուշահոտութիւն է բուրում նրանից, ամեն ինչ սարքին-կարգին է. և այդ ամբողջ պչրանքը, այդ ամբողջ դեկորացիան պիտի հաստատէ մարդկանց առաջ որ նա, այդ օծվածը, ամենաբարեպաշտ մարդն է:

Այսպէս է դրսի կողմը: Ժողովուրդը տեսնում է, հաւատում. ժողովուրդը ունի բարին և լաւը որոնելու և սիրելու ընդունակ. բայց այդ ընդունակը կոյր է, մոլորեցնող, եթէ մէջտեղ չը կայ խորը թափանցելու, ներսը դիտելու երկնային պարգևը: Եւ փարիսեցին միշտ և միշտ օգուտ է քաղում այդ անգիտութիւնից. նրանից է հանում իր գոյութեան համար անհրաժեշտ հիւթերը: Պաշտօնական, պատկերացած, յղկած ու յարդարած մաքրութեան դիմակ, որի տակ պատսպարված է ամենաանամօթ պոռնկութիւն, անառակութիւն: Նա քամում է դինին, որ նրա մէջ ընկած մժղուկը կուլ չը տայ, բայց կլանում է ամբողջ ուղտեր: Նա փակում է մարդկանց աչքերը, թոյլ չէ տալիս, որ ամբոխը հասկանայ, ճանաչէ ճշմարտութիւնը. ինքը հօ չէ կարող երբ և իցէ լոյս ճանաչել, բայց չէ թողնում, որ գոնէ ուրիշները տեսնեն: Նա բարձում է մարդկանց ուսերին պարտաւորութիւնների մի ահագին բեռ, բղաւում է ամեն օր, ամեն ժամ, խլացնում է մարդկանց յուսահատական ձայներով, բայց ինքն այդ ծանր բեռին չէ մօտենում և իր համար պարտաւորական չէ համարում իր պահանջները: Մեռած տառի, հնացած ծէսի պաշտողն է նա. կենդանի մարդուն զոհում է ծէսին. լաւ է, ասում է նա, մեռնի հիւանդը, քան թէ առողջանայ, եթէ առողջացնելու գործը պիտի խանգարէ այս ինչ ծէսը: Նա խունկ է ծխում առաքինի նահատակների առաջ, զարդարում է նրանց գերեզմանները, երգվում է նրանց անունով. նա լաց է լինում, կուրծք է ծեծում և կշտամբում է նահատակողներին. բայց մտածել, հասկանալ չէ ուզում, որ հէնց իր նմաններն էին նահատակողները: Դրսից խաբուսիկ փայլ, ներսից զաղրալի աղտեղութիւն. այդ է ահա մարդկութեան անռեալ, անմահ և արիւնարբու, մահացնող թշնամին...

Փարիսեցի—դա մարդու հրեշաւոր այլանդակութիւն է: Բարեպաշտութիւնը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ այդ տեսակ այլանդակութիւնից հեռու մնալու հասկացողութիւն. բայց այլանդակութիւնը ինքն է դառնում բարեպաշտութիւն: Ոչ մի սրբութիւնից չէ սարսափում նա, չը կայ սրբութիւն, որին չը մօտենայ նա՝ հանգիստ սրտով թիկն տալու համար: Եւ եթէ լսում է աղքատ, կրակոտ ձայնը, որ բարձրանում է նրան մերկացնելու համար, նա օրհասական այդ բօսէին բղաւում է. «Ի խաչ հան»: Եւ ամբոխը գնում է նրա ետեւից: Մարդկային բնութեան յատուկ է խաբվել, մոլորվել. ուրեմն կայ փարիսեցին և միշտ պիտի լինի:

Սարսափելի է մանաւանդ, երբ փարիսեցութիւնը դառնում է դասակարգային կազմակերպութիւն, երբ անհատների յատկութիւնները ձուլվում են մի սիստէմայի մէջ, համախմբվում են: Մթնում է լոյսը, օրը ապականվում է, ապականվում, խեղդում է անողորմ կերպով...

Լէօ

մինչև իսկ ստիպում էք ձեր հոգացողութեան ու խնամքին յանձնված ուսումնարանների փոքրիկ աշակերտներին ժամերով սպասեցնել տալ դրսում, ցրտի ու խոնաւութեան մէջ, իրանց ծակծկված ու մաշված կօշիկներով, և այնուհետև քարշ տալ նրանց անողորմ կերպով ահագին տարածութիւններ: Մանաւանդ տարվայ այս ժամանակում, երբ տարափոխիկ հիւանդութիւնները՝ ինֆլուէնցան, տիֆը, դիֆտերիտը, սկարլատինը, ծաղիկն ու կարմրուկն ահագին զոհեր են տանում մանուկ սերնդից: Ասացէք, ինչ անուն պէտք է տալ այդ տեսակ անզգուշութեան:

Ինչ ուզում էք պատասխանեցէք, միայն այդ տգեղ սովորութիւնը անչուշտ սարսափելի ու վերին աստիճանի վատ հետևանքներ ունի: Ննջեցեալի տիրոջից մի քանի ռուբլի ձեռք բերելու նպատակով յոգոտ ուսումնարանի, այդքան նեղութիւն, չարչարանք ու տանջանք պատճառել երկսեռ մանուկներին, զրկելով մի և նոյն ժամանակ նրանց օրվայ դասերից, դա խիստ դատապարտելի վարմունք է, խղճի հակառակ է: Վերջ պէտք է տալ:

Մ. Մ.

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՅԵՆԶԻ ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կոմս Դելիանով մշակել է մի նոր ծրագիր, որով այսուհետև վարժուհիները պէտք է քննութիւն տան, երբ ցանկանան ուսուցչական իրաւունք ձեռք բերելու: Իգական սեռի անձինք կարող են քննութիւն տալ հետևեալ կոչումները ստանալու համար. ա) սկզբնական դպրոցի վարժուհու, բ) տընային վարժուհու, գ) կրթական հաստատութիւնների ուսուցչուհու, դ) օտար լեզուի մասնաւոր վարժուհու և ե) ուսումնարանների մէջ օտար լեզուի ուսուցչուհու:

Քննութիւն կարող են տալ բոլոր 17 տարեկան օրիորդները, չը նայելով սովորել են նրանք որ և է դպրոցում, թէ ոչ:

Սկզբնական դպրոցի վարժուհու կոչում ստանալու համար պահանջվում է հետևեալը. կրօն՝ իգական գիմնազիաների կուրսով, համառօտ եկեղեցական պատմութիւն, ռուսաց և եկեղեցական—սլավեան լեզու (քաղաքային դպրոցների ծրագրով), թուաբանութիւն (քաղաքային դպրոցի ծրագրով), մեթոդիկա (սկզբնական ռուսաց լեզուի դրագիտութիւն ուսուցանելու), աշխարհագրութիւն, Ռուսաստանի աշխարհագրութեան և պատմութեան համառօտ դասընթացը:

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՆԸ

Յունվարի 29-ին կայանալու է Մարդասիրական ընկերութեան ընդհանուր ժողովը, որպէս զի ընկերութեան տարեկան անդամները և առհասարակ գործով քիչ թէ շատ հետաքրքրվողները արժանան մի քանի պաշտօնական թուեր լսելու: Ամեն տարի կայանում է ընկերութեան այդ ընդհանուր ժողովը, բայց ժողով գումարել միայն գումարելու և կանոնադրութեան որոշ կէտը կատարած լինելու համար—աւելի քան դատարկ ձևականութիւն է: Ամեն մի գործի մէջ անկեղծ մասնակցողի համար թանգ է այդ գործի ներքին բովանդակութիւնը և ամեն կանոնադրութեան կատարում այն ժամանակ միայն նշանակութիւն կունենայ, երբ նա բաւարարութիւն է տալիս ընթացիկ պահանջներին:

Բայց ընկերութեան ընդհանուր ժողովները, համարձակ կարելի է ասել, ապարդիւն ժամանակի, խօսքերի կորուստ են միայն: Լաւ զննող աչքերի համար այդ ժողովները, որոնք միայն անունով ընդհանուր են կոչվում, ոչ մի ներքին տարբերութիւն չունեն առհասարակ տեղի ունեցող խորհրդի ժողովներից՝ իսկ արտաքին տարբերութիւնն այն է միայն, որ նոյն խորհրդի ժողովները կայանում են հանդիսականների առաջ: Չը նայելով որ ներկայ է լինում բաւական մեծ բազմութիւն ամեն դասակարգի մարդկանց, չը նայելով որ շատերը նոյն իսկ պատրաստված են լինում ներգործական դեր կատարելու, բայց ամեն վճիռ տրվում է նոյն խորհրդի անդամների կողմից: Վճռվում են այդ հարցերը նախանձելի արագութեամբ: Նոր հարցերից մի քանիսը ընդունվում են միայն սկզբունքով՝ զլխատան անելու համար, «մինչև ցնոր կարդացվութիւն»: Արհամարհվում են առաջարկներ, խլացվում են ձայներ, մի մասը զբաղված է անմիտ ֆրազեօրութեամբ, միւս մասը պրօժեկտեօրներ են հանդիսանում, իսկ մեծամասնութիւնը պահում է երջանիկ լռութիւն... Ապա յաջորդում են փայլուն դրամով ծախված «յոտընկայս» ընորհակալութիւններ... Եւ այսպէս ամեն տարի...

Անշարժութիւնը կատարեալ է: Բացէք ընկերութեան հաշիւները և կը տեսնէք 100 ր. այս ինչ դպրոցին, 200 ր. միւս դպրոցին: Նրա ամենամեծ և այն էլ անտեղի օգնութիւնն է տարեկան 3000 ր. նպաստը, որ տրվում է Բագուի դպրոցներին: Ասում ենք անտեղի, որովհետև Բագուի հայոց դպրոցները աւելի պակաս, քան որ և է ուրիշ դպրոց իրաւունք ունեն նպաստ ստանալու...

Բայց դրա փոխանակ Մարդասիրական ընկերութիւնը մեծ ջանք է ցոյց տուել այն անգործ գործունէութեան մէջ, որ դիզել է կոչվում: Եւ մի ամենակարող բառ, որ մաքրում է մեր բոլոր մեղքերը, մեր անտարբերութիւնը, այդ անձեռնմխելի բառն է, որ դրոշմած է ընկերութեան փողերի վրա: Իսկ թէ որտեղ է այդ դիզելու սահմանը, սահման, որից յետոյ սկսվէր ծախսել, Երբ պէտք է ընկերութեան փողերը գործադրութեան մէջ մտնեն, այդ միայն Աստուած գիտէ:

Գոհութիւն Աստուծոյ, բաղդը մեզ չէ զրկել ոչ մի ցաւից և մեր շուրջ ամեն տեղ միայն կարիքն է ճնշում երկաթի ճանկերով,—կարիք մտաւոր, կարիք բարոյական, կարիք նիւթական, քաղցի, կարիք մի ամբողջ ժողովրդի, որ մի կերպ քարշ է տալիս իր կեանքը: Ասացէք ինչդրեմ, էլ որ օրվայ համար են այդ ընկերութիւնները, որոնց ականջին անգամ չէ հասնում այդ կարիքի ձայնը, որոնց զեկավարները անհոգ են և հանդիստ նստած միայն տոկոսներ հաշվել գիտեն և ընկերութեան փողերն էլ դիզել այնպէս, ինչպէս որ սեպհական հարստութիւն են դիզում: Նիւթական միջոց չեղած ժամանակ յայտնում ենք գործունեութեան պատրաստականութիւն, մեղք բարդելով փողի պակասութեան վրա, իսկ երբ այդ փողը կայ, դիզում ենք, դիզելու ինստինկտով և մեր բոլոր պատրաստականութիւնը օդն է ցընդում: Ժամանակ է խելքի գալ:

Ժամանակ է Մարդասիրական ընկերութեանը դուրս գալու այժմեան անգործութիւնից և մտնելու ժողովրդեան դրութեան մէջ: Նա, իբրև հասարակական հիմնարկութիւն, պէտք է տենդային աշխոյժով հետևել կեանքի երևոյթներին և մեր ներկայ կրիտիկական րոպէների մէջ պէտք է ցոյց տայ իր գոյութիւնը. նա հասարակական ոյժ և ֆակտոր պէտք է դառնայ—այս թող լաւ ըմբռնեն նրա վարիչները, և լաւ ըմբռնելով այդ, թէ իրանք սկսեն գործել և թէ ասպարէզ բաց անեն նոր նոր հարցերի և նոր հոսանքի՝ նոր մարդկանց համար: Աղայեան արհամարհանք զէպի փողով կրտսեր եղբայրները այժմ աւելի քան ծիծաղելի է ամենքի համար:

Իսկ մեր հասարակական գործով հետաքրքրվողները թող մի շարք կարևոր հարցեր մշակեն առաջիկայ ընդհանուր ժողովի համար, որպէս զի այս անգամ էլ ժողովը անբովանդակ չանցնի:

Ե.

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Յունվարի 15-ին

Դիմակաւորված «Արձագանքի» 3-րդ համարում տպած առաջնորդողը՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի դէմ, այստեղ զզուանքով կարդացվեց: Թէև այդ թերթին յատուկ վարքեցութեան եղանակը այս անգամ էլ սովորական էր, բայց մեր զզուանքը կրկնակի եղաւ, որովհետև այդ յօդուածը անպատկառութեան մի փորձ էր, թէև անաջող, Վեհափառ Հայրապետին ես թիւրիմացութեան մէջ գցելու՝ Սեդրակեան սրբազանին կարգ ու կանոնի անհնազանդ (?) հռչակելով և Վեհափառի ուշադրութիւնը հրաւիրելով այս հանդամանքի վրա:

Սեդրակեան սրբազանի, այս ականաւոր եկեղեցականի, կեանքը ամենքին էլ յայտնի է, որ պարտաճանաչութեան, կարգապահութեան, օրէնքների ճիշդ կիրառութեան նուիրված մի ամբողջ գործունէութիւն է եղել: Արդ, ինչումն է կայանում այս անձի ըմբոստութիւնը, կը հարցնէ անչուշտ զարմացած ընթերցողը: Ահա թէ ինչում.—Սեդրակեան սրբազանը հրաժարվել է ճեմարանի տեսչութիւնից և Վեհափառը ընդունել է այդ հրաժարականը հէնց առաջին անգամից: Ահա, յետադէմների օրգանի տեսակէտով, սրբազանի անհնազանդութիւնը, ահա նրա ըմբոստութիւնը:

Ինչ ասել կուզէ, որ մեր տարտիֆները չատ էլ ուրախ են սրբազանի հրաժարականով, բայց այնու ամենայնիւ, ինչու չօգտվել բարեպատեհ հանգամանքից և նրան անհնազանդ հռչակելով, կրկնակի սև նպատակի հասած լինել, մանաւանդ որ ընթերցողների չատերի միամտութիւնը պատրաստի հող էր դրա համար: Եւ ահա փրփուրը բերանները գուռացին, թէ Սեդրակեան սրբազանը կարգ ու օրէնք չէ յարգում:

Կարգ ու կանոնի դիմակաւոր նախանձախնդիրներ. Արիստակէս սրբազանին իրաւունք կունենայիք մեղադրել, եթէ Վեհափառը չընդունէր նրա հրաժարականը, բայց ինքը, սրբազանը, պնդէր իր հրաժարականի վրա: Փառք Աստուծոյ, որ այդպիսի բան չէ պատահել, ուրեմն ինչ էք գլուխներդ կորցրել, իրար գլխով դիպել:

Բայց լաւ խմացէք, որ հասարակութեան միամտութեան վրա սարքած ձեր ճիւաղային խաղերն էլ իրանց վախճանն ունեն. այդ փարիսեցիական յարձակումներով մաղի չափ անգամ վընաս տալ չէք կարող Սեդրակեան սրբազանի վարկին և անուան: Նրան ճանաչող և յարգող հասարակութիւնը կը ժպտայ ձեր բարբաջանքների վրա և միմիայն կը վշտանայ այն ժամանակ, երբ Արիստակէս սրբազանը ձեր գովասանքին արժանանայ: Եւ ինչ աւելի մեծ վիրաւորանք մարդու համար, քան ձեր գովասանքը... Ուրեմն շարունակեցէք, միայն չը մոռանաք լաւ անգիր անել ձեր այս հաւատամքը, այս ձեր պատերազմական երգը.—«Դարանակալք լիցուք արդարոյն, զի զբժպէտի եղև մեզ, հակառակ կայ գործոց մերոց և նախատինս դնէ մեզ զյանցանս օրինայն... Ծանր է տեսանել զնա, զի անմանք են այլոց կեանք նորա և այլազգի շաւիղք նորա, ի գարշութիւն համարեցաք նմա, խուսի ի ճանապարհաց մերոց, որպէս ի պղծութեանց»: (Գիրք Իմաստութեան Գլ. Բ.):

Z.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Յունվարի 15-ին

Երէկ երեկոյեան տեղիս օրիորդաց ուսումնարանի ուսուցչական խումբը մանկական երեկոյթ էր կազմել Կարապետեան ուսումնարանի ընդարձակ դահլիճում, որին ներկայ էին աշակերտուհիները, նրանց ծնողները և բազմաթիւ հիւրեր: Դահլիճի բեմը զարդարված էր դրդերով և դրօշակներով. բեմի աջ կողմը, ամբիոնի վրա, կախված էր Կայսրի պատկերը, ձախ կողմը Վեհափառ Կաթողիկոսի պատկերը և ապա ուսումնարանների բազմաբախտ բարերար և հիմնադիր Կարապետ եպիսկոպոսի պատկերը:

Նշանակած ժամից դեռ շատ վաղ ուսումնարանի դահլիճն արդէն կիսով չափ լցվել էր երկսեռ բազմութեամբ, իսկ հանդէսն սկսելիս դահլիճում այլ ևս ասեղ գցելու տեղ չը կար: Հանդէսն սկսվեց մօտաւորապէս ժամի 6-ից մի փաքր անց: Որովհետև Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան նախընթաց երեկոն էր, այդ պատճառով էլ երեկոյթի առաջին մասը մեծ մասամբ նուիրված էր նրան: Հանդէսը բացվեց «Տէր-պահեա զԿայսրը» օրհներգով, որից յետոյ աշակերտուհիները կարդացին Վեհափառին նուիրված ոտանաւորներ, նրա վերջին ճանապարհորդութեան ժամանակ պատահած դէպքերի նկարագիր, «Դրախտի ընտանիք» և միւս գրուածքներից երեխաների հասկացողութեան մատչելի դարձրած հատուածներ և այլն, որոնք լաւ տպաւորութիւն թողին հանդիսականների վրա:

Պէտք է խոստովանած, որ երեկոյթի ծրագիրը բաւական լաւ էր կազմած և ընտրած նիւթերն էլ բազմակողմանի էին: Լաւ տպաւորութիւն թողեց մանաւանդ Ղ. Աղայեանցի «Գիւղնաղ տատը» և «Մանիր, մանիր իմ ճախարակ» մանկական կտորները, որ աշակերտուհիները բաւական աջող և կենդանի կերպով ներկայացրին: Ոտանաւորներին, արձակ հատուածներին, թէ տեղական և թէ գրականական բարբառով արտասանած անեկդոտներին յաջորդում էին խմբական և առանձնական երգերը, իսկ ընդմիջումներում նուագում էր տեղիս քաղաքային ուսումնարանի աշակերտական նուագախումբը: Թէ երգերը և թէ նուագախումբը բաւական տպորժելի տպաւորութիւն թողին: Հանդիսի վերջում աշակերտուհիները ներկայացրին Բաֆֆիի «Ամեն տեղ տիրած խորին լռութիւն» գեղեցիկ ոտանաւորից: Նժդեհ պատանու ու հիւրերի ներկայութիւնը՝ բէնգալեան կրակի դիւթիչ ազդեցութեան տակ՝ գեղեցիկ տպաւորութիւն թողեց:

Ընդհանրապէս երեկոյթը չատ աջող անցաւ:

Առհասարակ այս տեսակ երեկոյթները բարեբար ազդեցութիւն ու կրթիչ նշանակութիւն կարող են ունենալ թէ աշակերտուհիների և թէ մեր հասարակութեան համար, որի մէջ մինչև օրս էլ դեռ ասիական փակ կեանքն է տիրապետում: Մեր կարծիքով ուսումնարանը չատ մեծ օգուտ կը լինի տուած հասարակութեանը, մանաւանդ կանանց, եթէ այսպիսի երեկոյթներ յաճախ ունենայ:

***

ՆԱՄԱԿ ԶԱՔԱԹԱԼԱՑԻՑ

Յունվարի 18-ին

Ցնորեան երեկոյեան հայոց ուսումնարանի հոգաբարձունները, ուսուցիչներն ու աշակերտներից երդողները «Աւետիս» մանգալով, յոգոտ ուսումնարանի ժողովեցին 116 ր. 50 կ.: Մասնակցում էին և պ. պ. Անիեանց և Տէր-Սարգսեանց, որովհետև երեք խումբ էր շրջում, որոնցից մէկ խումբը կազմում էին ընորհակալութեան արժանի վերոյիշեալ անձինք, աշակերտների հետ:

Մեր հասարակական գործերը վարելու համար այս ձմեռ կատարված ընտրութիւնները բաւական աջող անցան: Քաղաքի դէպուտատներ ընտրվեցին նախկիններն՝ պ. պ. Գ. Ստեփանեանց և Մ. Ոնանեանց: Եկեղեցու երեցփոխ ընտրվեց պ. Ա. Աւետեան, որի ընտրութիւնը նոյնպէս աջող էր: Շուտով պէտք է կատարվի և ուսումնարանի հոգաբարձուների ընտրութիւն. ցանկալի կը լինէր, որ դա ևս նոյնքան աջող լինի, որքան նախկինները:

Ամսիս 15-ին, Վեհ. Կաթողիկոսի անուանակոչութեան օրը, հանդիսաւոր պատարագ մատուցվեց և կարդացվեց անդրանիկ կօնդակը: Նախ քան կօնդակի կարդալը, պատարագիչ քահանան բացատրեց կօնդակի մտքը. ներկայ էին ուսուցչական խումբը տղակերտներով և մեծ բազմութիւն: Այդ օրը բոլոր խանութները փակված էին: Այդ օրը հասարակութիւնը մի շնորհաւորական հեռագիր ուղարկեց Էջմիածին:

Տեղիս սիրողները, ուսուցիչների հետ միասին, մտադիր են շուտով մի ներկայացում տալ յոգոտ ուսումնարանի. ընտրված պիէսան է «Խաթաբալան»: Աջողութիւն ենք ցանկանում:

***

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յունվարի 10-ին

Մեր դպրոցների տնտեսական ապահովութիւնը գլխաւորապէս կախված է բարերարների նուէրներից և աջակցութիւնից, քանի որ այդ դպրոցները կամ բաւականաչափ եկամուտների աղբիւր չունեն, կամ կօնտրոլի և խնամքի պակասութեան պատճառով՝ եկամուտները բուն նպատակին չեն ծառայում:

Այժմ գոյութիւն ունեցող հայոց չորս սեմինարիաներից երկուսը՝ Ներսիսեան և Նոր-Նախիջևանի դպրոցները՝ տնտեսապէս ապահովված են, իսկ միւս երկուսը՝ Ղարաբաղի և Երևանինը՝ շատ հեռու են այդ դրութիւնից: Թէև մեզ թվում է, որ Ղարաբաղի թեմական դպրոցի համար այնքան էլ դժուար չէ այժմեան 12—13 հազար եկամուտը հասցնել 20 հազարի, քանի որ դեռ 1887 թվին նա ունէր՝ 18,969 ռուբլի 22 կոպ. եկամուտ, երբ ոչ մոտից ստացվող ներկայ եկամուտն ունէր, ոչ էլ մոտ 25 հազար դրամագլխի շահը:

Այդ, ի հարկէ, ապագայի խնդիր է. սակայն ուսումնարանը այժմ էլ ունի անթիւ, անհամար ամենաանհրաժեշտ պահանջներ, որոնց դիմաց միայն լսում էք ներկայ հոգաբարձունների «բիւդժէի անփոփոխութիւն», «դրամագլխի շահացումն» խօսքերը:

Հասկանալի է այս հանգամանքներում, թէ ինչ մեծ շնորհակալութեան արժանի է բագուաբնակ պ. Յովհաննէս Աղամեանցը, որն իր հանգուցեալ մօր՝ Խանում Աղամեանցի մահվան տարեդարձին, ուղարկել է լինում 200 ռուբլի այն պայմանով, որ այդ գումարով ձեռք բերվի սեմինարիայի համար մարզակազմութեան վերաբերեալ մոդէլներ: Ցարդելի նուիրատուի ցանկութիւնը արդէն կատարված է և շուտով Պետերբուրգի Ֆէնու և ընկերութիւնից կը ստացվեն այդ պատուէրները:

Երանի թէ դամբանականներում և լրագիրներում

հռչակված այն բազմաթիւ անձինք, որոնք իրանց հանգուցեալ ազգականների յիշատակին նուէրներ են խոստացել նոյն դպրոցին, սակայն փառաբանվելուց յետոյ մոռացել են իրանց տուած խօսքը՝ դպրատանայնին և խղճահարվէքին այժմ։

Չեմ կարող հրապարակապէս շնորհակալութիւն չը յայտնել և պ. Մ. Խանդամիրեանին, որը ձրիաբար տուեց իր թատրոնական դահլիճը նոյն յունվարի 2-ին կայացած Ղարաբաղի Թեմական դպրոցի աշակերտական գրական-ձայնական առաւօտի համար։

Տեսուչ դպրոցի՝ Լեոն Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ տարի ամառը մի հունգարացի, դոկտոր Հօրվատ անունով, եկել էր Կովկաս հետազօտելու ֆիլոքսերան և այդ նպատակով մի ուղևորութիւն է կատարել Քութայիսի նահանգում։ Վերադառնալով Հունգարիա պ. Հօրվատ, չը բաւականանալով իր մասնագիտութեան վերաբերեալ արած հետազօտութիւնները հաղորդելու, կարդացել է Բուդա-Պէշտում մի հրապարակական դասախօսութիւն՝ նկարագրելով Կովկասը և Արարատ սարի շրջակայքը ոչ միայն ֆիլոքսէրայի, այլ նաև պատմական, քաղաքական և մտաւոր տեսակէտից։ Ի հարկէ, մի երկու ամսվայ մէջ կատարած ճանապարհորդութիւնը չէր կարող պարոնին միջոց տալ աւելի մօտ ծանօթանալու բազմացեղ Կովկասի հետ և բնականաբար, նրա տուած տեղեկութիւնները սխալներով լի են։ Դոկտոր Հօրվատ անուանում է հայերին և թուրքերին ծ ա յ լ և դ ա ն դ ա ղ և կարծում է, որ Կովկասի ամբողջ արդիւնագործութիւնը միայն ռուսների ձեռքումն է։ Այդ դասախօսութեան դէմ մի հերքումն է տըպել պ. Յակոբ Զիլինկարեան «Revue d'Orient» լրագրի մէջ, որով հրաւիրում է դասախօսին աւելի լուրջ վերաբերվել այդպիսի հարցերին։

—

Մի խումբ երիտասարդ գործակատարներ, Բագուից, հանգանակելով իրանց մէջ 38 րուբլի, ուղարկել են մեզ այդ գումարը պ. Միսկարեանի միջոցով, հետևեալ նամակի հետ միասին. «Ուղարկելով ձեր խմբագրութեան այս 38 րուբլին, խնդրում ենք յատկացնել այն սովեալներին, որոնց մասին գրված էր «Մշակի» № 7 «Ակնարկների» մէջ»։ Ցաւում ենք, որ անկարող ենք տպագրել նուիրատուների անունները։ Մեր խմբագրութիւնը որոշեց այդ 38 րուբլին ուղարկել Ալէքսանդրօպոլի Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղին, որպէս զի նա գործ դնի կամ էժանագին ճաշարանի վրա, կամ ուղղակի բաժանի քաղցի կարօտ ընտանիքներին։ Այսօր, յունվարի 27-ին, այդ փողը ուղարկեցինք Ալէքսանդրօպոլ, Բարեգործական ընկերութեան վարչութեան անունով։

—

Ներքին գործերի մինիստրը պ. Պօղոս Իզմայլօվին հաստատել է Թիֆլիսի քաղաքագլուխ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիւրքաց բարձր կառավարութիւնը կարգադրութիւն է արել, որ տեղական իշխանութիւնները թոյլ չը տան գաւառական հարստահարիչ դրամատէրերին՝ ցորենն ամբարելու և թանգ գներով ծախելու, ի նկատի ունենալով Թիւրքիայում տիրող սովը։ Տարաբաղդաբար, ինչպէս երևում է Թիւրքաց Հայաստանից մեր ստացած տեղեկութիւններից, Կ. Պօլսից արված այդ կարգադրութիւնը մնում է մեռած տառ։ Շատ քաղաքներում հարուստ վաճառականները ահագին քանակութեամբ ցորեն են ամբարում, և սպասում են, որ գները աւելի բարձրանան։

—

Ցուցակ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Մոզդօկից, Գրիգոր Նազարեանից՝ 2 ր. 2) Ղուբայից, Սօֆիա Դանիէլ-Բէգից՝ 5 րուբլի. 3) Մոսկվայից, Աւետիս Մանուէլեանից՝ 8 ր. (Մնաց. բաժ.), 4) Աստրախանից, Աստուր Ազամեանից՝ 8 ր. (Մնաց. բաժ.)։ Ուրեմն նախկին 1886 րուբլի 16 կոպէկի հետ այժմ ունենք 1909 րուբլի 16 կոպէկ։

—

Որպէս յայտնի է, «Новости» լրագիրը տպել էր մի քանի յօդուածներ Տուլայի բանկի վարչութեան արած զեղծումների դէմ։ Բանկի վարչութիւնը դատ սկսեց լրագրի խմբագրի դէմ։ Նահանգական դատարանը դատապարտեց նրան, բայց դատաստանական պալատն արդարացրեց։ Գործը հասաւ սենատին։ Սենատը վերջնականապէս արդարացրեց «Новости» լրագրի խմբագրին։ Այդ առիթով ռուս մամուլի լաւագոյն մասը ողջունում է սենատի այդ վճիռը, համարելով այդ մամուլի յաղթութիւն։ «Судебная Газета» լրագիրն ասում է. «Հեշտ չէ ասպարէզ գալ մերկացնողի դերում մի ազդեցիկ, դրամական միջոցներով զօրեղ բանկի դէմ։ Մեզ մօտ դեռ չեն ընտելացել մամուլի ազատութեանը, նրա համարձակ և դատապարտող ձայնին։ Մամուլի ազատութիւնը լաւ է գաղափարական աշխարհում, նրա վերացական հասկացողութեան մէջ։ Բայց հէնց որ մամուլը կը սկսի որ և մէկին մերկացնել, այն ժամանակ զօրեղ դիմադրութեան կը հանդիպի, կառաջացնի թշնամութիւն և նրա անխնայ վրէժխնդրութիւնը։ Մենք ուրախ ենք մեր մամուլի համար, այն բանի համար, որ նրա իրաւունքները ընդլայնված են։ Մեր ամենիս աչքերի առջև տեղի էին ունենում բանկային սնանկութիւններ, բազմաթիւ մարդիկ կորցնում էին իրանց կարողութիւնը,—իրանց աշխատած փողը, վերջին կոպէկները։ Ցանցառուներին պատժելը չէր կարող ամոքել այն մարդկանց, որոնք զրկվում էին իրանց վաստակից և մուրացկան էին դառնում։ Մամուլի արթուն կօնտրօլը կարող է սնանկութիւնների և թշուառութեան առաջն առնել, կարող է օգնել մարդկանց։ Մամուլը տեղեկացաւ, որ այս ինչ հիմնարկութեան մէջ զեղծումներ են կատարվում, աղմուկ բարձրացրեց և հետաքրքրված մարդկանց ուշադրութիւնը գրաւելով՝ թէ գործը և թէ դրամագլուխները ազատեց վտանգից։ Երբ մամուլը լռում է, վախենում է ամենազօրեղ գործիչների հալածանքներից, հասարակութիւնը այն ժամանակն է ծանօթանում գործերի դրութեան հետ, երբ հիմնարկութեան բոլոր կապիտալները արդէն անդունդ են գլորվել»։

—

Մայրաքաղաքի լրագիրները լսել են, որ պետական կալուածների մինիստր Երմօլօվ ամառը կայցելի Կովկաս։ Այդ այցելութիւնը կապ ունի այն բազմաթիւ հարցերի հետ, որոնք մեծ նշանակութիւն ունեն մեր երկրի համար։

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվել են Վիէննայի Մխիթարեան տպարանի հետևեալ երկու նոր հրատարակութիւնները. 1) «Հայք յԵղիսաբեթուպօլիս Դրանսիլուանիոյ»։ Այս 533 երեսներից բաղկացած ստուար աշխատութիւնը, որ գրել է հայր Գրիգոր Գովրիկեան, պարունակում է իր մէջ Տրանսիլվանիայի հայ գաղթականութեան մի դարու պատմութիւնը (1680—1779). գինն է 4 ֆր. 50 ս.։ Այս աշխատութիւնը Վիէննայի Մխիթարեան միաբանութեան ձեռնարկած «Ազգային մատենադարան» հրատարակութեան շարքի մէջ XI-դ տեղն է բռնում։ 2) «Հայ գիւղական տունը», աշխատութիւն Փարսադան Տէր-Մովսէսեանի, 55 պատկերով։ Այս աշխատութեան բնագիրը «Das armenische Bauernhaus» անունով տպված էր առաջ Վիէննայի գերմանական անթրոպօլօգիական ընկերութեան ամսագրում, յետոյ թարգմանութիւնը մաս մաս տպագրվեց «Հանդէս Ամսօրեայ»-ում և այժմ այդ թարգմանութիւնը արտատպված է և հրատարակված առանձին գրքոյկով։ «Հայ գիւղական տունը» նպատակ ունի ծանօթացնել եւրօպացիներին մեր նահապետական տան շինութեան և ահագին օջախի ունեցած նշանակութեան հետ։ Գինն է 2 ֆրանկ։ 3) «Քննական Հայեացք», գրեց Ե. Ղ. տպված Թիֆլիսում ներկայ 1894 թւին, բաղկացած 45 երեսից և արժէ 20 կոպէկ։ Այդ գրուածքի քննութեան առարկան Շիրվանզադէի «Արսէն Դիմաքսեան» անունով վէպն է։ 4) «Արևելեան Աւանդութիւն», թարգմանութիւն Եւրէինօվից, արտատպված «Գրականական ու Պատմական» հանդէսից, գինն է 5 կոպէկ։

—

Յունվարի 27-ին, «Каспій» լրագրի խօսքերով, Բագուի դումայի դահլիճում կայացել է 37 ձայնաւորների խորհրդակցութիւն՝ քաղաքագլուխ ընտրելու համար։ Ի միջի այլոց, քաղաքագլխի կանդիդատ է առաջարկված պ. Ղուկասեան։

—

Ռուս հրատարակիչ պ. Պավլենկօվի հրատարակութեամբ նորերս Պետերբուրգում լոյս տեսաւ մի նոր բնախօսական գիրք «Наука о жизни» վերնագրով, աշխատութիւն երիտասարդ բնագէտ Վ. Լունկևիչի։ Գիրքը գրված է մատչելի կերպով, և կարդացվում է մեծ հետաքրքրութեամբ։ Այդ աշխատութեան համառօտութիւնն է այն գիրքը, որ անցեալ տարի լոյս տեսաւ հայերէն լեզուով՝ «Հանրամատչելի բնախօսութիւն» վերնագրով, Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ։ Ռուսերէն հրատարակութիւնը զարդարված է հրաշալի նկարներով։ Ռուս լրագիրները գովեստով են խօսում այդ գրքի մասին, առաջարկելով նրան իբրև օգտաւէտ ընթերցանութեան գիրք։

—

Լուր կայ, որ պարսից Շահը գալու է Ռուսաստան յունիսի սկզբին։

—

Մեզ հաղորդում են, որ այսօր, հինգշաբթի, յունվարի 27-ին, Թիֆլիսի թատրոնում լինելի հայոց ներկայացման արդիւնքի մի մասը պէտք է յատկացվի յօգուտ Րաֆայէլ Պատկանեանի արձանի։ Յոյս ունենք, որ այդ համակրելի նպատակը մեր հասարակութիւնը թատրոն կը գրաւի։

—

Մոսկվայի բնագիտական ընկերութեան կենդանաբանական բաժինը հրատարակել է նորերս մի մեծ հատոր գիրք, որի մէջ նշանակված են այն աշխատութիւնները, որոնք վերաբերում են կենդանաբանութեան և լոյս են տեսել 1885—1889 թւականը։ Իւրաքանչիւր աշխատութեան մասին հաղորդված են համառօտ տեղեկութիւններ, իսկ մի քանիսներից առաջ են բերված էական կտորներ։ Կովկասի բնագիտութիւնն էլ բաւական տեղ է բռնել. Բիլների, Դինիկի, Լօրենցի, Շալրօվի, Դունաեվսկու հետազօտութիւնները տալիս են տեղեկութիւններ ձկների, վայրի չորքոտանիների և թռչունների մասին։ Գիրքը կրում է հետևեալ վերնագիրը «Отчеты о русской зоологической литературѣ» (1885—1889). Հրատարակված է Մոսկվայում, 1893 թւին. գինն է 3 րուբլի։

—

Ալէքսանդրօպօլից, հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութիւնը մեզ խնդրում է տպագրել հետևեալը. «Անցեալ դեկտեմբերի 14-ին, տեղիս քաղաքային կլուբի դահլիճում ընկերութեան օգտին տրված պարահանդէսից գոյացաւ ընդհանուր մուտք՝ տոմսակներից և նուիրատուութիւններից ու բուֆէտից 578 ր. 45 կ., ծախս՝ ընդամենը 76 ր. 80 կ.։ Զուտ արդիւնք մնաց 501 ր. 65 կ.։ Ներկայացնելով այս հաշիւը հասարակութեանը, վարչութիւնս քաղցր պարտականութիւն է համարում յայտնել խորին շնորհակալութիւն տ.տ. Իշխանուհի Բեբուտովային, Գրիգորևային, Խոյցեանին, Տէր-Մարտիրոսեանին, Օհանջանեանին, օր. օր. Բաբայեանին, Կոստանեանին, Ալիբէկեանին, վարչութեան անդամուհի Անդրէասեանին և պ.պ. գեներալ Պրօսկուրեակովին, Իշխան Բեբուտովին, Վօզնեսենսկուն, Տիգրանեանին, Տէր-Պօղոսեանին, ընդհանուր ժողովի նախագահ Պապաջանեանին և նոյնպէս կլուբի աւագների խորհրդին, որը տուեց ձրիապէս կլուբի դահլիճը»։

—

Թիֆլիսում ստացվել է առողջապահութեան նուիրված «Будьте здоровы» հանրամատչելի ռուս թերթի առաջին համարը։ Թերթը հրատարակվում է Պետերբուրգում, լոյս է տեսնելու ամիսը երկու անգամ, բժիշկ Զարուբինի խմբագրութեամբ։ Թերթի ծրագիրը լայն է. նա ամփոփում է թէ ընտանեկան և թէ հասարակական առողջապահութեան խնդիրները։ Այդ թերթը արժէ տարեկան 5 րուբլի։

—

Զմիւռնիայի հայոց ընթերցարանի վարչութիւնը մեզ խնդրում է տպագրել հետևեալը. «Քաղաքիս հայ ընթերցարանի 25-ամեայ յոբելեանի հանդէսը պիտի կատարվի յառաջիկայ փետրվարի 6/18-ին Ս. Մեսրոպեան վարժարանին մէջ՝ նախագահութեամբ վիճակիս առաջնորդ գեր. Ներսէս ծ. վ. Աւանեանի։ Հեռագիրք, նամակք և նուէրք ուղղելի են հետևեալ հասցէին՝ Հայ ընթերցատուն, Զմիւռնիա, Cabinet de lecture Armenien»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Ամսիս 15-ին, Վեհափառ կաթողիկոսի անուանակոչութեան օրը, գաւառապետի օգնական պ. Սնիգիրեվի կարգադրութեամբ, բոլոր խանութները փակվեցան։ Ժողովուրդը մեծ բազմութեամբ դիմում էր դէպի եկեղեցի։ Ժամերգութիւնից առաջ, երկու սեռի դպրոցներում, տօնի առիթով դպրոցական հանդէսներ էին պատրաստված։ Ժողովուրդը համարեա թէ լցրել էր ս. Աստուածածնի մայր եկեղեցին, երբ բոլոր դպրոցների ուսուցիչները և ուսուցչուհիները իրանց սաներով շտապեցին եկեղեցին։ Պատարագի ժամանակ, տարաբաղդաբար, չէր երգում մեր քառաձայն խումբը։ Աշտ վարդապետը մի երկար ճառ խօսեց Վեհափառ Հայրիկի անձնաւորութեան և նշանաւոր գործերի մասին։ Պատարագը վերջանալուց յետոյ քահանայական դասը և հանդիսականների մի խուռն բազմութիւն գնացին յաջորդարան՝ շնորհաւորելու Վեհափառի անուանակոչութիւնը։ Ներկայացան երիտասարդներ, ուսուցիչներ, վաճառականներ և արհեստաւորներ։ Քաղաքի կողմից ներկայացան և շնորհաւորեցին գաւառապետի օգնական պ. Սնիգիրեվ և քաղաքի դէպուտատ պ. Սաֆարեան։ Վերջիններս քաղաքի կողմից շնորհաւորական հեռագիր ուղարկեցին Էջմիածին՝ հայոց եկեղեցու բարձրագոյն պետին։ Նոյն օրը բազմաթիւ հեռագիրներ ուղարկվեցան Էջմիածին երիտասարդների, վաճառականների, արհեստաւորների և մասնաւոր անհատների կողմից»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Խաւարամիտների այստեղի ներկայացուցիչները, որոնց թիւը, բարեբաղդաբար, մի քանիսից չէ անցնում, իրանց արարքներով, հասարակական և դպրոցական գործերում բռնած դիրքով,—ամեն կողմ դժգոհութիւն են յարուցանում։ Զարմանալի է, որ այդ մարդիկ ամեն տեղ, իրանց փտած, անպէտք մտքերի հետ միասին՝ միշտ միջոցների մէջ էլ խտրութիւն չեն դնում»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 29-ին, մի քանի ուսուցիչներ, մի քանի օրիորդների և տիկինների մասնակցութեամբ, մի ներկայացում տուեցին յօգուտ ուսումնարանի։ Խաղացին «Քանդած օջախ» և «Խէչօի թուղը»։ Խաղը աջող էր, իսկ մուտքը անբաւարար։ Շնորհակալութիւն ենք յայտնում տիկիններին և օրիորդներին, որ ուրախութեամբ մասնակցեցին ներկայացմանը»։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Լսում ենք, որ տեղիս հոգևոր կառավարութիւնն արդէն հրաման է տուել ուսումնարանների նոր հոգաբարձուներ ընտրելու համար։ Ցանկալ ենք, որ հասարակութիւնը թանգ գնահատելով ուսումնարանի շահերը՝ գիտակցաբար կը վերաբերվի այդ ընտրութեանը և կընտրէ այնպիսի հոգաբարձուներ, որոնք թէ իրանց հասկացողութեամբ և թէ մտաւոր կարողութեամբ միանգամայն համապատասխան կը լինեն իրանց կոչմանը»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մի քանի նամակներ ստացանք համարեա նոյն բովանդակութեամբ։ Նամակներից մէկի մէջ ասված է. «Այստեղ մի քանի պարոններ, մի քահանայի առաջնորդութեամբ, հէնց որ մթնում է, սկսում են դռնէ դուռն ընկնել մի թերթ ձեռներին և ողորմութիւն խնդրել, սրանից նրանից կոպէկներ մուրալ, յանուն մամուլի։ Տանտէրը, ի հարկէ, ստիպված մի բան տալիս է, որովհետև դատարկ յետ տալը անքաղաքավարութիւն է համարում։ Զարմանալին այն է, որ այդ պարոնները գործում են խաւար մթնոլորտի մէջ, երևի իրանք էլ ամաչում են իրանց ստանձնած դերից. խորհուրդ ենք տալիս դրանց կարդալ Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանները»։ Միւս նամակագիրը հարցնում է. «Կարելի՞ էր կարծել, որ մարդ այն աստիճան կը ստորանայ, որ կը դիմի մուրացկանութեան իր ողորմելի գոյութիւնը պահպանելու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ ՄԻ ՆՈՐ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

Ֆրանսիական կնոջը այս օրերս աջողվեց մի բաւական խոշոր յաղթութիւն տանել, այն էլ սենատում, որը մինչև այժմ կանանց հարցի ամենայամառ հակառակորդն էր համարվում։ Երկար տատանումներից յետոյ, վերջապէս սենատորները վճռեցին իրաւունք տալ կանանց մասնակցել առևտրական դատարանի ընտրութիւններին։ Դրա հետ միաժամանակ նորերս հիմնված Avant-Courriere կանանց ընկերութիւնը մեծ պրոպագանդա է անում և աշխատում է, որ իրաւաբանութեան դօկտոր տիկին Շօվէնի նախաձեռնութեամբ պարլամենտին առաջարկած օրինագիծը՝ կանանց քաղաքացիական հաւասար իրաւունքներ տալու մասին, յօգուտ կանանց լուծումն ստանայ։ Բացի դրանից կանայք աշխատում են, որ իրանք, ա-

մուսնանալուց յետոյ իրաւունք ունենան իրանց աշխատանքի և գոյքի տերը լինել և կարգադրել այնպէս, ինչպէս իրանք են ցանկանում: Տիկին Շովէն վերոյիշեալ օրինագիծը, մի մանրամասն յօդուածի հետ միասին, ուղարկել է պատգամաւորներին, սենատորներին և հասարակութեան մէջ աղդեցութիւն ունեցող անձանց: Կանանց այդ ջանքերը բաւական միխիթարական հետեւանք ունեցան: Ֆրանսիական կանանց անբնական և սարկական վիճակը հասարակութեան ուշադրութեան առարկայ է դարձել և Ֆրանսիացիք այժմ համոզվել են, որ ժամանակ է, վերջապէս, կանանց օրինական պահանջներին բաւականութիւն տալ:

ՍԵՐԲԻԱ

«Politik.» լրագրի Բելգրադի թղթակիցը ասում է, որ Միլանի գործունէութեան ընթացքից երևում է, որ նա երկար չէ մնալու Սերբիայում: Հասարակական ժողովներին նա գնում է ոչ թէ միայն իր աղիտանոի հետ, այլ մինիստրների ուղեկցութեամբ, չը նայելով որ նա օրէնքով սերբիական քաղաքացի էլ չէ. մի խօսքով, նա կատարեալ մի խնամակալի դեր է կատարում:

Լուր է պտտում, որ նա աշխատում է իր որդուն՝ Ալէքսանդր թագաւորին ուղարկել երկրատև ճանապարհորդութիւն անելու համար, որպէս զի նրա բացակայութեան ժամանակ կարողանայ կառավարել երկիրը խնամակալի իրաւունքներով: Ալէքսանդր թագաւորի ճանապարհորդութիւնը, որպէս ասում են, կէս տարի է տևելու: Լուր է տարածվել նոյնպէս, որ չուտով Բելգրադ է գնալու Նատալիա թագուհին, սակայն կարճ ժամանակով: Այդ լուրերը մասամբ հաստատվում են նրանով, որ Բելգրադի ոստիկանապետ Բասկան, որը սկուպշտինայի վճիռը՝ թագուհուն աքսորելու մասին, ի կատար ածեց, արձակվեց իր պաշտօնից:

Գերմանական դեսպանի նախաձեռնութեամբ, Գերմանիայի, Աւստրօ-Ունգարիայի, Անգլիայի, Իտալիայի, Թիւրքիայի և Բուլգարիայի ներկայացուցիչները այս օրերս այցելութիւն գործեցին սերբիական նախկին թագաւորին: Ռուս և ֆրանսիական դեսպանները հրաժարվեցին այդ քայլից, դրանով հակացնել կամենալով, որ նրանց կարծիքով, Միլանի վերադարձը Սերբիա ապօրինի է: Հետեւեալ օրը Միլանը այցելեց բոլոր դեսպաններին, բացի ռուս և ֆրանսիական դեսպաններից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սերբիական թագաւորի պալատի առաջ եղած ցոյցերի մասին լրագիրները հետեւեալ մանրամասնութիւններն են հաղորդում: Երեկոյեան 5 ժամին, մօտ երկու հարիւր ուսանողներ, որոնց հետ միացաւ և մի քանի հարիւր հոգուց բաղկացած ամբոխը, մօտեցան թագաւորական պալատին: Միաժամանակ լուր էր տարածվել Նատալիա թագուհու դալու մասին, որը բաւական մեծ բազմութիւն էր հաւաքել քաղաքի մի ուրիշ մասում: Ուսանողները ցոյց էին անում պալատի պատուհանների առաջ «կեցցէ ժողովուրդ, կեցցէ սահմանադրութիւն» աղաղակներով: Թագաւորի շրջաբերականը այրեցին նրա պատուհանների առջև: Մի քանի րոպէից յետոյ ժանդարմների մի հեծելազունդ եկաւ և ցրվեց ցոյց անողներին:

—Լօրդերի ժողովը ընդունեց երկրորդ ընթերցանութեան ժամանակ տեղական վարչութեան ռէֆօրմին վերաբերեալ բիլը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզի ոստիկանութեան պրէֆէկտը, իր ոստիկաններին փորձելու համար, յունվարի 12-ին (24) Օպէրա թատրօն գնաց՝ կռան տակը ունենալով մի ծրար: Ոստիկանները նրան անարգիստ կարծելով՝ իսկոյն կալանաւորեցին և քննութեան ենթարկեցին (ոստիկանները անձամբ չէին ճանաչում իրանց գլխաւորին): Այն ժամանակ պրէֆէկտը ժպտալով իր անունն ասեց և գովեց ստորադրեալների գործողութիւնը:

***

Հիւանդին բժշկելու համար, դուք կարծում էք, ընթերցող, պէտք նրան գտնել, մանրամասն քննել նրա հիւանդութիւնը. չարաչար սխալվում էք: Գիտութիւնը շատ առաջ է գնացել և նրա արժանաւոր ներկայացուցիչները այդպիսի դատարկ բաներով էլ չեն պարապում. նրանք գտել են նոր մեթոդ, ահա նա.—բժիշկը պէտք է կանգնի հիւանդից 5 արշին հեռու և նայի հիւանդի մէջքին, այն ժամանակ նա բոլորը կը հասկանայ... Չէք հաւատում, կարդացէք «Новое Обозр.»-ում տպած իշխանուհի Վախվախովայի ու բժիշկ Մայսուրեանցի նամակները... Գիտնականները, նախանձից դողդողած, ի հարկէ չեն ընդունի բժիշկ Մայսուրեանցի հանճարեղ նոր գիւտը, ինչպէս չեն ընդունում երկար ժամանակ շատ նոր ճշմարտութիւններ. բայց, բժիշկ Մայսուրեանցը կարող է համոզված լինել, որ նրա հանճարի առաջ կը խոնարհեն իրենց գլուխը, եթէ ոչ կենդանիները, գէթ հանգուցեալները, կամ մահամերձ հիւանդները...

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԱՐԻԶ, 24 յունվարի: Վալիան մահվան պատժի է ենթարկված այսօր. ոչինչ անցքեր տեղի չունեցան: Վալիանի մահվան պատժի լուրը տարածվեց միայն երէկ երեկոյեան շատ ուշ, այնպէս որ «Բակէտ» հրապարակի վրա քիչ հասարակութիւն հաւաքվեց: Հրապարակը շրջապատված էր հետեակ զօրքի 4 վաշտով, հեծելազօրքի մէկ էսկադրօնով և 500 պոլիցիականներով: Դէյքլէր դահճի խնդիրքով, գիլիօտինան շրջապատող պարիսպը լայնացրած էր: Լուրեր են պատում, որ իբր թէ կարնօ մի քանի նամակներ է ստացել սպառնալիքներով:

ԲԵՐԼԻՆ, 25 յունվարի: «Norddeutsche Allgemeine Zeitung» լրագրի տեղեկութիւնների համաձայն, ռուս-գերմանական դաշնագիրը սակաղնի մասին ստորագրված է երէկ երեկոյեան: Դաշնագրին, ճիշդ է, դեռ վերջնական ձև չէ տրված, բայց կասկած չը կայ, որ ձևականութիւն կատարելու համար միայն մի քանի օր կը պահանջվի: Դաշնագիրը կապելուց յետոյ դաշնակցական խորհրդին անյապաղ կառաջարկվի համապատասխան օրինագիծը:

ՎԻԵՆՆԱ, 26 յունվարի: Վիրաբոյժ Բիլրօտ երէկ վախճանվեց սրտի կաթուածից:—Բակենիցայում, տեղական հիւրանոցներից մէկի առջև, պայթեց դինամիտային փամփուշտ, բայց մարդկանց հետ դժբաղդութիւն չը պատահեց:

ԲԵՐԼԻՆ, 26 յունվարի: Կապրիվիի մօտ ճաշին նախագահ Լավէցօվ հանդէս եկաւ կայսրի առաջ՝ ի պաշտպանութիւն հողային չահերի: Կայսրը պատշաճաւոր ուշադրութեամբ լսեց պարլամենտի աչքի ընկնող անդամներին. բայց յետոյ յայտարարեց, որ առևտրական դաշնագրի ընդունելը, ի նկատի ունենալով գործերի դրութիւնը, քաղաքական և տնտեսական անհրաժեշտութեան հետեւանք է: Դաշնագրի նախագիծը կառաջարկվի ռեյխստագին փետրվարի 20-ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի: Պրոֆէսօր Զախարինին, աչքի առաջ ունենալով նրա առանձնակի ծառայութիւնները, շնորհված է ս. Աղէքսանդր Նէվսկու շքանշանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունվարի 25-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ	93 ր.	05 կ.
Բերլին վրա 100 մարկ —	45 ր.	55 »
Պարիզի վրա 100 ֆրանկ —	36 »	75 »
Ոսկի — — արժէ	7 »	42 »
Մաքսային կուպոններ —	148 »	— »
Արծաթ — — —	— »	— »
Բօրսային դիսկոնտներ —	5 »	7 »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	103 »	50 »
— — — — 2-րդ	102⅝ »	— »
— — — — 3-րդ	102⅛ »	— »
5% ոսկեայ ըէնտա	160 »	— »
4% ոսկեայ փոխառութիւն	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	101 »	— »
— — — 3-րդ —	101⅛ »	75 »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	241 »	— »
— — երկրորդ —	225 »	24 »
Պետական երկաթուղային ըէնտա.	102 »	— »
4½% ըէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան	95⅝ »	25 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100⅞ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — —	190 »	— »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	99⅛ »	— »
4½% գրաւական թղթեր կալուած.		
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	152 »	75 »
— — — թղթադ.	101 »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	100 »	75 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100⅞ »	75 »
Օդէսայի . — —	100 »	— »
Թիֆլիսի — — .	— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	— »	— »
— — Քութայիսի — .	— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հրատարակութիւն ԱԲԵԼ ԱԳՐԷՍԵԱՆԻ

Գինն է 1 ր. 25 կ., ձան. ծախսով 1 ր. 50 կ. վաճառվում է բացառապէս Բ. Քամալեանի գրավաճառանոցում, Գօլովինսկի պրոսպէկտ, Թիֆլիսի ժողովարանի տակ:

(№ 26) 5—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վներական (սիֆիլիս) հիւանդութիւնների:

Կ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10½ ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10½—11½ ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՍԵՎԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ:

Հիւանդանոցի վերատեսուչ՝ բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ: (№ 72)

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1) «ԷՎԷԼԻՆԱ», էտիւդ, գինն է . . 50 կոպ

2) «ԱՑՍՏԵՂ ԵԻ ԱՑՆՏԵՂ», » . . 10 »

3) «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖ. ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ» . , . . 25 »

4) Նոյնը՝ գերմաներէն լեզուով . . 25 »

5) «DIE HUNGERSNOTH IN TURKISCH ARMENIEN» . . . . . 20 »

Վաճառվում է «Մշակի» խմբագրատունը և Թիֆլիսի գրավաճառանոցներում:

(№ 23) 6—10

Լոյս տեսաւ և վաճառվում է

ՐԱՖՖԻԻ ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐԸ

100 հատը արժէ 20 ր. — կ.
50 » » 12 » — »
1 » » — » 30 »
Թիֆլիսից դուրս, ճանապարհածախսով » » — » 40 »

Շուտով լոյս կը տեսնի ՐԱՖԱՅԷԼ Պատկեանի պատկերը նոյն գիրքով և արժողութեամբ:

Օտար քաղաքացիք դիմում են. Тифлисъ, Саркису Согомонянцъ.

До востребованія. (№ 19) 8—10

ՆԵՐԿԱՑ 1894 ԹՒԱԿԱՆԻՑ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԹԷՀՐԱՆՈՒՄ

„ՇԱՒԻՂ"

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Տարեկան գինը 10 ղրան, կէս տարվանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի: Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարվանը 5 ֆր կամ 2 ր.:

Հասցէն. Téhéran. Rédaction „SCHAVIGH".: 1—3

1894 Г.

ОТКРЫТА ПОДПИСКА НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„БАКИНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ"

(ОКОЛО 360 НОМЕРОВЪ ВЪ ГОДЪ)

Подписная цѣна: Съ доставкою въ г. Баку: На 1 годъ 2 р.! на 6 мѣсяцевъ 1 г. 40 к. Съ пересылкою по почтѣ: На 1 годъ 3 р. 50 к., на 6 мѣсяцевъ 2 р. Плата за объявленія: За строку петита, отъ 1 до 3 разъ: на 1-й страницѣ 8 коп., на 4-й 6 к.; болѣе трехъ разъ—по особой таксѣ. Годовыя объявленія: на 1-й страницѣ—по 1½, на послѣдней—по 1 коп. за строку петита. Ищущимъ труда и занятій и благотворительнымъ учрежденіямъ дѣлается 50%, казеннымъ учрежденіямъ 10% скидки. За годовыя объявленія въ 5 стр. петита въ отдѣлѣ «Адресъ-календарь», съ правомъ мѣнять текстъ три раза, взим. по 12 руб.

Подписка и объявленія принимаются въ конторѣ газ. «Бакинскія Объявленія» (Лалаевскій пр., помѣщеніе конторы типографіи Гюльбасарова и Шахбагова). Телефонъ № 123. 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Հայկական ներկայացումն Բաժանորդագրութիւն 16.

Հինգշաբթի, յունվարի 27-ին, հայ դերասանական խումբը կը ներկայացնէ՝

I. „ՍԿԱՊԷՆԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ"

կամ 3 գործ., հեղ. Մոլիէրի, թարգմ. Ց. Լալայեանի

II. „ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈԹՈՐԻԿ"

վոդ. 1 գործ.

Սկիզբն է ճիշդ 7½ ժամին: Տեղերի գինը սովորական է: 2—2

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՈՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ տանի մէջ նշանակված է ԱՃՈՒՐԴ, 2-ին փետրվարի սոյն ամի, առանց կրկնաձրդի, կապալով տալու համար էջմիածնապատկան այգին Օրթաճալայի:

Անդամ կոնսիստորիայի՝ Գաբրիէլ քահ. Տէր-Գաբրիէլեանց 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ

Ութերորդ գիրքը: Գրքի գինն է 50 կոպ., վաճառվում է „կենտրոնական գրավաճառանոցում" և մեզ մօտ:

Շուտով մամուլի տակ կը մտնի մեր ժողովածուի Տասներորդ գիրքը: Զեռնհաս անձանց խնդրում ենք ուղարկել մեզ հետեւեալ նիւթերը.—Հեքիաթներ. Ժող. երգեր. Առածներ. Հանելուկներ. Արտասանութիւններ. Անէծքներ. Օրհնութիւններ. Երդումներ. Աղօթքներ. Քաղաքական խօսքեր. Մանկական խաղեր. Ժողովրդական բառեր. Ոճեր. Դարձուածներ, և այլն: Այդ աւանդութիւնները պէտք է գրել բուն տեղական բարբառով:

Մեր հասցէն՝ Тифлисъ, Городская Управа. Տիգրան Նաւասարդեանց:

(№ 6) 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Января 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.